

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Նախնադյան Մարտին Սիմոնի

Կալանքը որպես պատժատեսակ ըստ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի
Դաշնության քրեական օրենսդրության

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2017

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

Налбандян Мартын Симонович

Арест как мера наказания по уголовному законодательству Республики Армения и
Российской Федерации

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени
кандидата юридических наук по специальности
12.00.05 - «Уголовное право и криминология; уголовно-исполнительное право»

ЕРЕВАН -2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Զ.Ա.Թադևոսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Ս.Շ.Ծաղիկյան**,
իրավաբանական գիտությունների
թեկնածու **Ա.Պ.Վարդևանյան**

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի ապրիլի 22-ին՝ ժամը 11:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ԲՈՀ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք.Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2017թ. մարտի 21-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու**

 **Ջ.Վ.Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Российско-Армянском университете

Научный руководитель:

кандидат юридических наук,
доцент **З.А. Тадевосян**

Официальные оппоненты:

доктор юридических наук,
профессор **С.Ш.Цагикян**, кандидат
юридических наук **А.П.Вардеванян**

Ведущая организация:

Институт философии, социологии и
права НАН РА

Защита диссертации состоится 22-ого апреля 2017 года в 11:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г.Ереван, ОвсепаЭмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 21-ого марта 2017г.

**Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук**

 **Дж.А.Айрапетян**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Հետազոտվող թեմայի արդիականությունը. Հայաստանի Հանրապետությունում (<<), ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունում (ՌԴ) իրավական պետության կայացման արդի փուլում իրականացվող քաղաքական, տնտեսական և իրավական բարեփոխումները միաժամանակ նպատակաուղղված են քրեական օրենսդրության արմատական բարեփոխմանը:

Մեր երկրի քրեաիրավական քաղաքականության մեջ բազմիցս է շեշտվել հանցագործությունների դեմ պետական հարկադրանքի միջոցների կիրառման անհրաժեշտությունը, այնպիսի միջոցների, որոնք միտված են վերականգնելու սոցիալական արդարությունը, հասնելու իրավախախտ անձի ուղղմանը և հանցագործությունների կանխմանը: Խնդիր է դրվում այդ արդյունքներն ապահովել այնպիսի պատիժների կիրառմամբ, որոնք համեմատաբար քիչ դժվարություններ կառաջացնեն հանցագործություններ կատարած անձանց համար: Այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ են ամփոփ միջոցներ կատարելագործելու ոչ միայն քրեական, քրեակատարողական օրենսդրություններն ընդհանրապես, այլև դրանց առանձին ինստիտուտները:

Դատաիրավական բարեփոխումներն օրակարգի հարց են առաջադրում պատժահամակարգի մեջ ընդգրկված պատիժների բովանդակության փոփոխումը, նոր պայմաններում դրանց ներգործության տարրերի ամբողջականության արդիականացումը, նորերի հայտնաբերումը, որոնք առավել արդյունավետ կարող են լինել հանցագործությունների դեմ տարվող պայքարում:

Այս ամենը նախապայմաններ ստեղծեց պատժահամակարգում նոր պատժատեսակի՝ կալանքի ներդրման համար: Վերջին տարիներին հասարակության մեջ գործազրկության աճի, աշխատատեղերի կտրուկ նվազման, արտադրության ճյուղերի մասնավորեցման պայմաններում դատապարտյալների աշխատանքի տեղավորման անհնարինությունը պահանջ առաջացրեց գործող ՔՕ պատժահամակարգից հանել (2006 թ.) ազատազրկման հետ չկապված և դատական պրակտիկայում լայն կիրառում ստացած ուղղիչ աշխատանքները:

Կալանքը, որպես քրեական օրենսդրության մեջ նորամուծություն, արտահայտվում է դատապարտյալին կարճ ժամկետով հասարակությունից մեկուսացնելու մեջ: Դրա էության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ այն, վերջին հաշվով, ընկալվում է որպես կարճաժամկետ ազատազրկում:

Գործող քրեական օրենսդրությունը բազմաթիվ նոր դրույթներ է պարունակում համեմատած նախորդի հետ: Ինչպես նշեցինք, էապես փոխվել է պատժահամակարգը, նոր բովանդակությամբ են շարադրված պատիժների նպատակները, որոնք, անտարակույս, պահանջում են տեսական և գործնական ուսումնասիրություններ:

Քրեական քաղաքականության առաջնահերթությունները և դրանց շարադրանքը գործող օրենսդրության մեջ կարևորվում են այնքանով, որ անհրաժեշտ է քրեական օրենսդրության զարգացման ուղղությունների թվին դասել նաև հասարակական հարաբերությունների արդյունավետ պաշտպանության ապահովումն իրականացնող ինստիտուտները, որոնք կարգավորվում են օրենսդրության տարբեր ճյուղերի, այդ թվում քրեական օրենսդրության կողմից:

Կալանքի նշանակման և կատարման գործընթացները սկսվեցին քրեական օրենսգիրքը (ՔՕ) գործողության մեջ դնելուց բավական ուշ, որը պայմանավորված էր այդ պատժատեսակի կրման համար համապատասխան քրեակատարողական հիմնարկների բացակայությամբ, դրանց գործունեության յուրահատկությամբ և կրման կարգի առանձնահատկություններով: Թվարկված չափորոշիչների հստակ չպահպանումը կալանքը կվերածեր կարճաժամկետ ազատազրկման և կվերանար դրա կիրառման անհրաժեշտությունը և կունենայինք ազատազրկման տարատեսակ՝ իր բացասական առանձնահատկություններով ու բովանդակությամբ: Այս հարցը բավական երկար ժամանակ դարձել է քննարկման առարկա հանրաճանաչ քրեագետների ուսումնասիրություններում (Մ.Դ. Շարգորդսկի, Ի.Մ. Գալպերին, Վ.Ն. Կուդրյավցև, Գ.Ա. Չլոբին, Բ.Ս. Նիկիֆորով, Ա.Հ.Գաբուլյան, Ա.Թ. Թովմասյան, Զ.Ա. Թադևոսյան), որոնց հետևությունը եղել է մեկը. հանցագործությունների դեմ պայքարում ազատազրկման կիրառումն անարդյունավետ է և հղի է մի շարք վտանգավոր հետևանքներով (հանցավորության ռեցիդիվ, ազատազրկման վայրերում դատապարտվածների շփումների արդյունքում բացասական բնավորության գծերի արմատավորում, հասարակական կյանքից կտրվելու վտանգ, քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների «վարքի կանոնների» փորձի փոխանցում, պատիժը կրելուց հետո սոցիալական կյանքին ինտեգրման բարդություններ և այլն):

Քրեական օրենսդրության բարեփոխումներն այսօր նպատակաուղղված են քրեական պատիժների կրման ռեժիմի մեղմացմանը, ավելի բազմատեսակ ներգործության տարրերով օժտված պատժատեսակների ներդրմանը, որոնք հնարավորություն կտան դատարանին ավելի անհատականացնել քրեական պատիժը, պատիժների էության մեջ ներդնել ներգործության այնպիսի տարրեր, որոնք կօգնեն դատապարտյալներին պատիժը կրելուց հետո ազնիվ աշխատանքի վերադառնալու, հասարակության մեջ ինտեգրվելու գործընթացին, ապահովել այնպիսի պատժատեսակների կիրառման հնարավորություն, որոնք կնվազեցնեն որոշակի ժամկետով ազատազրկման կիրառման սահմանները, ավելի շատ ներդնել այնպիսի խրախուսանքի նորմեր, որոնք թույլ կտան իրավախախտումներ կատարած անձանց պատժելու փոխարեն նրանց նկատմամբ ներգործության այլ միջոցներ կիրառել:

Թվարկածի հետ միասին պետք է շեշտել, որ դեռևս հնարավոր չէ հասարակության անդորրն ապահովել առանց քրեական պատիժների, առանձին դեպքերում հանցանք կատարած անձանց մեկուսացման խստագույն տարրերով օժտված պատժատեսակների կիրառման: Այս առումով պատժահամակարգում կալանքի ներդրումը պետք է դրական համարել, թեպետ որ այն իր կարճաժամկետ, սակայն ներգործության յուրահատուկ առանձնահատկություններով կնպաստի ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների կանխարգելմանը, այդ արարքները կատարած անձանց ուղղմանն ու սոցիալական արդարության վերականգնմանը:

Այս առումով գործող օրենսդրության պատժահամակարգում նոր ընդգրկված և մոտավորապես վեց տարի կիրառության մեջ դրված պատժատեսակի՝ կալանքի էության, դատարանների կողմից կիրառման, քրեակատարողական

հիմնարկներում կատարման և հանցագործությունների դեմ տարվող պայքարում դրա արդյունավետության հարցերի ուսումնասիրության ու պարզաբանման ուղղությամբ մեր հանրապետությունում գիտական հետազոտություններ չեն կատարվել, որը պայմանավորված է հիմնականում այդ պատժատեսակի քրեաիրավական հետազոտության անհրաժեշտությամբ, հրատապությամբ և արդիականությամբ:

Թեմայի մշակվածության աստիճանը. Քրեական իրավունքի տեսության մեջ պատժի ինստիտուտը բավական խորը և հանգամանալից ուսումնասիրված է, որի վկայությունն են կազմում հրապարակված բազմաթիվ աշխատությունները: Պատիժների առանձին տեսակների քրեաիրավական էության, կիրառման ու կատարման հիմնախնդիրներով զբաղվել են բազմաթիվ հանրաճանաչ գիտնականներ, այդ թվում՝ Մ.Գ.Շարգորոդսկին, Ն.Ա. Բեյլանը, Ի.Մ.Գալպերինը, Ի.Ա.Բուշունը, Վ.Ն.Կուդրյավցևը, Մ.Ն.Գերնետը, Գ.Ա.Զլոբինը, Յու.Բ.Մելնիկովան, Զ.Ա.Վիշինսկայան, Վ.Ի.Կուրյանդսկին, Ա.Ե.Նատաշևը, Բ.Ս.Նիկիֆորովը, Ա.Լ.Ռեմենսոնը, Ն.Ա.Ստրոյկովը, Վ.Մ.Ստեպաշինը, Վ.Ս.Ուտևսկին, Ի.Վ.Շմարովը, Ա.Մ.Յակովլևը, Ն.Դ.Եվլոնը, Վ.Պ.Մախոտկինը, Ա.Ա.Շիկովը, Կ.Ա.Դոլգուպլովը, Ն.Ն.Կոնդրաշկովը, Մ.Ա.Չելցով-Բեբուտովը, Ա.Ի.Չուչևսկայան, հայ քրեագետներից Ա.Թ.Թովմասյանը, Ա.Հ.Գաբրիելյանը, Գ.Ս.Ղազինյանը, Զ.Ա.Թադևոսյանը, Ն.Ս.Մաղաքյանը, Հ.Մ.Խաչիկյանը և շատ ուրիշներ:

Նշված հեղինակներից շատերն իրենց գիտական հետազոտություններում հանգամանալից կանգ են առել առանձին պատժատեսակների նպատակների, դրանց էության, նշանակման, արդյունավետության, առանձնահատկությունների, կիրառման խնդիրների պարզաբանման վրա, պատժատեսակների և իրավական ներգործության այլ միջոցների ընդհանրությունների ու առանձնահատկությունների, ներգործության տարրերի բնորոշ հատկանիշների, պատիժների կատարման տեսական և պրակտիկ բարդությունների վրա: Սակայն առանձին մենագրություններ կալանքի՝ որպես քրեական պատժատեսակի, մասին այսօր բացակայում են, բացառությամբ քրեական իրավունքի դասագրքերի ու ՀՀ ՔՕ-ին նվիրված ոչ մեծ թվով ուսումնասիրությունների: Միայն վերջին տարիներին առանձին հեղինակների աշխատություններում անդրադարձ է եղել այս պատժատեսակի լուսաբանման հարցերին (Վ.Վ. Բեզանովա, Վ.Ն. Պետրոսյան, Վ.Վ. Յակովլև, Ս.Ի.Ֆատտախով, Ա.Ի.Տրաով, Ա.Ի.Չուչևսկայան, Կ.Ա.Դոլգուպլով, Վ.Մ.Ստեպաշին և այլն):

Հետազոտության նպատակն է քրեաիրավական վերլուծության ենթարկել կալանքի՝ որպես պատժատեսակի, էությունը, դրա նշանակման, կատարման առանձնահատկությունները, որոշվի դրա տեղը գործող քրեական պատժահամակարգում, սահմանվի արդյունավետության այն չափաբաժինը, որը կարող է վրա հասնել երկրի վարած պատժական քաղաքականության բարդ գործընթացում:

Նպատակն առաջացրել է հետևյալ **խնդիրները** լուծելու անհրաժեշտություն՝

ա) գտնել այն ճանապարհներն ու հնարավորությունները, որոնք կբացահայտեն կալանքի կիրառման հեռանկարները,

բ) վերլուծել այն թերություններն ու բացթողումները, որոնք տեղ են գտել գործող օրենսդրության մեջ,

գ) ուսումնասիրել քրեական օրենսդրության կատարելագործման ուղիները՝ երաշխավորելու կալանքի նշանակման, կիրառման գործընթացների արդյունավետ իրականացումը:

Հետազոտության օբյեկտն է այն հասարակական հարաբերությունների ամբողջությունը, որն առաջանում է ՀՀ (ՌԴ) քրեական օրենսդրության պատժահամակարգի կատարելագործման արդյունքում կալանքի՝ որպես հիմնական պատժատեսակի, ներդրման անհրաժեշտությամբ, ինչպես նաև այդ պատժատեսակի էության բացահայտումը, այն օրինաչափությունների ու հարաբերությունների պարզաբանումը, որոնք պայմաններ են ստեղծում դատարանների կողմից դրա կիրառման համար:

Հետազոտության առարկան են կազմում որպես հասարակությունից կարճաժամկետ մեկուսացման պատժատեսակի նշանակման, դատական վիճակագրության և քրեակատարողական հիմնարկներում դրա կատարման հիմնադրույթները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմում ճանաչողության դիալեկտիկական մեթոդը, որին համապատասխան ապահովվել են գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր և հատուկ այնպիսի մեթոդներ, որպիսիք պատմական, տրամաբանական, համեմատական-իրավական, վիճակագրական տվյալների վերլուծություններն են, ինչպես նաև սոցիոլոգիական հետազոտության մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքն են կազմել քրեական իրավունքի, քրեակատարողական իրավունքի, քրեական դատավարության և այլ ոլորտների հայրենական և արտասահմանյան երկրների՝ հիմնականում Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) գիտնականների աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ հիմքը. Հետազոտության համար նորմատիվ հիմք են հանդիսացել ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը (ՔՕ), ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (ՔԴՕ), ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը (ՔԿՕ), մի շարք նորմատիվ ակտեր, ինչպես նաև ՌԴ ՔՕ-ն, ՌԴ ՔԴՕ-ն, ՌԴ ՔԿՕ-ն և այլ նորմատիվ իրավական ակտեր:

Հետազոտության գիտական նորույթը կազմում են կալանքի՝ որպես քրեական պատժի, համալիր վերլուծությունը, որը ներդրվել է գործող ՔՕ մեջ մեր հասարակությունում սոցիալ-տնտեսական, քրեաիրավական և իրավակիրառ կյանքում կատարված փոփոխությունների արդյունքում: Գիտական նորույթը միաժամանակ կայանում է նրանում, որ կալանքի, որպես քրեական պատժատեսակի համալիր հետազոտություն, իրականացվում է ատենախոսության շրջանակներում առաջին անգամ:

Բացի այդ, հետազոտության ընթացքում մշակվել և հիմնավորվել է ՀՀ քրեական, քրեակատարողական օրենսգրքերի կոնկրետ հոդվածներում որոշակի փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը:

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է նաև **պաշտպանության ներկայացվող հեղկյալ դրույթներում.**

1. Ատենախոսության մեջ տրված է կալանքի, որպես քրեական պատժի բնորոշումը, համապատասխան որի, այն քրեակատարողական հատուկ հիմնարկում՝ կալանատան (զինվորականների համար՝ կայազորային կարգապահական

մեկուսարանում), անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում որոշակի ժամկետով դատապարտյալի պահելն է, որտեղ նա գտնվում է ազատության խիստ սահմանափակման պայմաններում՝ զրկված ուղղիչ հիմնարկից այլ վայր տեղափոխվելու հնարավորությունից, բացառությամբ այն բացառիկ հիմքերի, որոնք նշված են օրենքում: Այդ սահմանափակումները նպատակ են հետապնդում անձին պահել մեկուսացման պայմաններում, որպեսզի նա զրկվի նոր հանցագործություններ կատարելու հնարավորությունից և վերագնահատի իր թույլ տված հանցավոր վարքագիծը:

2. ՀՀ քրեական և քրեակատարողական օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկվում է ՀՀ ՔՕ 57-րդ հոդվածի 1-ին մասում «Կալանքը կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում՝ տասնհինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով և միայն այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել» հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կալանքը կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում՝ տասնհինգ օրից մինչև վեց ամիս ժամկետով և միայն այն դեպքերում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել և անձը նախկինում դատապարտված չի եղել ազատագրվման հետ կապված պատժատեսակի»:

3. Ատենախոսության մեջ միաժամանակ առաջարկվել է ՀՀ ՔՕ Հատուկ մասի այն հոդվածներում, որտեղ նախատեսված է կալանքի՝ որպես պատժատեսակի, նշանակման հնարավորություն, պարտադիր նախատեսել նաև տուգանքը կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու պատժատեսակները, քանի որ եթե այս երկու հիմնական պատժատեսակները երկրնտրանքի սկզբունքով նախատեսված լինեն ՀՀ ՔՕ Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում կալանքի հետ, կալանքի նշանակման անթույլատրելիության հանգամանքի առկայության դեպքում (ՀՀ ՔՕ 57-րդ հոդվածի 2-րդ մաս) կկիրառվեն այդ պատժատեսակները որպես ներգործության ավելի մեղմ տարրերով օժտված քրեաիրավական պատիժներ: Ըստ 57-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնների՝ կալանքի նշանակումը պայմանավորված է ոչ թե արարքի քրեաիրավական բնութագրիչներով, այլև հանցավորի անձնական բնութագրիչներով, որոնք ուղղակի արգելում են նրանց նկատմամբ կիրառել կալանքը:

4. ՀՀ ՔՕ 51-րդ և 54-րդ հոդվածները նախատեսել են տուգանքը վճարելու անհնարինությունը, հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելն ավելի խիստ պատիժներով փոխարինելու դեպքերը: Կալանքի կատարումից չարամտորեն խուսափելու դեպքերում (կալանքի վերաբերյալ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատապարտյալի կամավոր չներկայանալը քրեակատարողական հիմնարկ, կամ անձնական բնույթի բացառիկ իրադարձությունների հետ կապված կարճաժամկետ մեկնումից առանց հարգելի պատճառների չվերադառնալը) օրենսդիրը չի սահմանել ներգործության առանձին կարգ: Այս կապակցությամբ առաջարկվում է ՀՀ ՔՕ 57-րդ հոդվածը լրացնել հետևյալ հասկացությամբ. «Կալանքը կրելուց չարամտորեն խուսափելու դեպքում կալանքի չկրած մասը դատարանը փոխարինում է ազատագրվմամբ՝ կալանքի մեկ օրը հաշվարկելով ազատագրվման երկու օրվա դիմաց»:

5. ՀՀ ՔԿՕ 55-րդ հոդվածը չի տալիս «դատապարտյալի պատիժը կրելու մեկ վայրից մյուսը փոխադրելու» և «անձնական անվտանգությունն ապահովելու» և «այլ բացառիկ հանգամանքները, որոնք խոչընդոտում են տվյալ վայրում դատապարտյալի պատիժը կրելու» հասկացությունների հիմքերն ու բովանդակությունը:

Առաջարկվում է բացառիկ հանգամանքների, պատիժը կրելու մեկ վայրից մյուսը փոխադրելու և անձնական անվտանգությունն ապահովելու հասկացությունների տակ հասկանալ տարբերային աղետները (ջրհեղեղ, երկրաշարժ և այլն), տեխնաձին բնույթի այլ իրադարձությունները (ատոմակայանի պայթյուն, հրկիզում, ահաբեկչություն, զանգվածային անկարգություններ և այլն): Բացառիկ հանգամանք համարել նաև կալանատանը ծագած իրավախախտումների կանխարգելման ու կատարված հանցագործությունների բացահայտման անհրաժեշտությունը, նույն քրեական գործով կալանքի դատապարտված անձանց տարանջատման խնդիրը, իրավապահ մարմինների հետ համագործակցությամբ հանցագործության բացահայտմանն ակտիվ մասնակցություն ցուցաբերած դատապարտյալի անվտանգության ապահովումը, ինչպես նաև կալանքի դատապարտված անձանց հանդիպումը մեծահասակ ծնողների ու անչափահաս երեխաների հետ կազմակերպելու նպատակով թվարկված անձանց կալանատան գտնվելու վայր ներկայանալու անհնարինությունը, կալանատներում ծագած զանգվածային անկարգությունները, դատաարտյալների անհնազանդությունը, կալանատներում բացահայտված տարափոխիկ և վարակիչ հիվանդությունների օջախները չեզոքացնելու նպատակով կազմակերպվող միջոցառումները և այլն:

Հետազոտության փորձառական (էմպիրիկ) հիմքը. Հետազոտության փորձառական հիմքն են կազմում դատարանների կողմից կալանքի՝ որպես քրեական պատժատեսակի, կիրառման մասին 2008-2015 թվականների վիճակագրական տվյալները, ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ 2008-2015 թթ. քննած ընտրանքային կարգով հետազոտված բազմաթիվ գործերի ուսումնասիրության արդյունքները, իրավաբանների (քննիչներ, դատախազներ, փաստաբաններ, դատավորներ) թվով 60 անձանց շրջանում անցկացված բանավոր հարցման արդյունքները:

Ատենախոսության տեսական նշանակությունը. Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ հայրենական քրեական իրավունքի գիտության մեջ կալանքի՝ որպես քրեական պատժատեսակի համալիր ուսումնասիրություն ատենախոսության մակարդակով կատարվում է առաջին անգամ, որը հիմք կարող է հանդիսանալ պատժահամակարգի նպատակահարմարության, դրանում ընդգրկված պատժատեսակների՝ հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ նշանակման արդյունավետության գիտական վերլուծության համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը. Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները՝ առաջարկությունները, մոտեցումները, եզրահանգումները, գործող օրենսդրության մեջ կատարվելիք լրացումները կարող են օգտակար լինել պատժահամակարգի մեջ մտնող պատժատեսակների էության բացահայտման,

դրանց ներգործության տարրերի ավելի խորը և բազմակողմանի պարզաբանման, քրեական և քրեակատարողական օրենսդրության մեջ կալանքին վերաբերող հոդվածների բովանդակության կատարելագործման համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումն ու ներդրումը. Ատենախոսության հիմնադրույթները և եզրահանգումները քննարկվել են Հայ-Ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնում, ինչպես նաև ներկայացվել են հեղինակի հրապարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը. Ատենախոսությունը շարադրված է ՀՀ ԲՈՀ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան, բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, որոնք ներառում են հինգ պարագրաֆներ, եզրակացությունից, օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության մշակվածության աստիճանը, նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, մեթոդաբանական, տեսական և նորմատիվ հիմքերը, գիտական նորույթը, ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ինչպես նաև ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Առաջին գլուխը՝ «Կալանքի՝ որպես քրեական պատժի տեսակի, իրավական բնութագիրն ըստ ՀՀ և ՌԴ քրեական օրենսդրությունների» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից և նվիրված է կալանքի՝ որպես պատժատեսակի, ոսումնասիրությանը և իրավահամեմատական վերլուծությանը:

Առաջին գլխի առաջին պարագրաֆը՝ «Կալանքի՝ որպես քրեական պատժի ինքնուրույն տեսակի, հասկացությունը և նպատակները», հանգամանորեն քննարկում է կալանքի տեղն ու դերը պատժահամակարգում, դրա նպատակները, ներկայացնում է պատժի այդ տեսակին բնորոշ հատկանիշները, յուրահատկությունները, նշանակման և կատարման առանձնահատկությունները, կալանքի կրման պայմանները:

Ըստ ՀՀ ՔՕ կալանքը համարվում է ավելի մեղմ պատժատեսակ, քան որոշակի ժամկետով ազատազրկումը, սակայն գործնականում կալանքով նախատեսված սահմանափակումները և մեկուսացման պայմաններն ավելի խիստ են: Ելնելով կալանքի այս հատկանիշներից՝ վեր են հանվում այն խնդիրները և օրենսդրական բացերը, որոնք առկա են այդ պատժատեսակի կիրառման համատեքստում (պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով կամ պատիժը կրելուց չարամտորեն խուսափելու դեպքում ավելի խիստ պատժատեսակով փոխարինելը, կալանքի կրման նպատակները) և որոնք խոչընդոտում են պատժի նպատակների լիիրավ իրագործմանը:

Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա առաջարկվում է բարձրացնել կալանքի սահմանման առավելագույն շեմը և նեղացնել կալանքի ենթակա անձանց շրջանակը: Մասնավորապես սահմանել, որ կալանքը՝ որպես քրեական պատժի տեսակ, կարող է նշանակվել ոչ մեծ ու միջին ծանրության հանցանքների համար ՀՀ ՔՕ Հատուկ մասով նախատեսված դեպքերում, տասնհինգ օրից մինչև վեց ամիս ժամկետով (ի տեղեկություն նշենք, որ ՌԴ քրեական օրենսգրքը կալանքի առավելագույն ժամկետ է սահմանել վեց ամիսը) և միայն այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել և անձը նախկինում ազատազրկման ձևով պատիժ չի կրել:

Երկրորդ պարագրաֆը՝ «Կալանքի՝ որպես քրեական պատժի էությունն ըստ ՀՀ և ՌԴ քրեական օրենսդրությունների», հետազոտում է կալանքի՝ որպես պատժի տեսակի, կիրառությունը, էությունն ու բովանդակությունը, ինչպես նաև ներկայացվում են կալանքի արդյունավետության բարձրացմանը միտված առաջարկություններ:

Ուսումնասիրվում է կալանքի տեղն ու դերը պատժահամակարգում: Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ պատիժների փոխարինելիության սկզբունքը կալանքի պարագայում ՀՀ ՔՕ-ն լիարժեք չի ապահովում: Օրենսդրական բացը լրացնելու և պատժի անխուսափելիության սկզբունքը ապահովելու համար առաջարկվում է մի շարք հոդվածների պատիժների ցանկը համալրել կալանքով:

Հանգամանորեն հիմնավորվում է մի շարք միջոցառումների (օրինակ՝ հանրօգուտ աշխատանքներ) անհրաժեշտությունը կալանքի նպատակների իրականացման արդյունավետության բարձրացման համատեքստում:

Երկրորդ գլուխը՝ «Կալանքի՝ որպես քրեական պատժի նշանակումը և կատարումը» վերտառությամբ, կազմված է երեք պարագրաֆներից, որոնցում ներկայացվում են կալանքի նշանակման, կատարման ընթացակարգերը և գնահատվում է դրա կիրառման արդյունավետությունը:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Կալանքի՝ որպես քրեական պատժի, նշանակումը», ներկայացվում են կալանքի նշանակման ընթացակարգերը, մասնավորապես պատժի անհատականացման սկզբունքի ապահովման համատեքստում:

ՀՀ ՔՕ մի շարք հոդվածներում, որոնցով երկրնորանքի ձևով նախատեսված են կալանքը և որոշակի ազատազրկման ձևով պատժատեսակները, հակասություն է առաջանում ՀՀ ՔՕ հոդված 61-ի պահանջի հետ (հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստը չի կարող ապահովել պատժի նպատակները) և խոչընդոտում է ավելի մեղմ պատժատեսակի լիարժեք կիրառմանը: Նման հակասությունները գլխավորապես պայմանավորված են քրեական օրենսգրքում կալանքի առավելագույն ժամկետի անհամաչափ սահմանմամբ:

Ուսումնասիրվում է նաև կալանքի՝ որպես հիմնական պատժատեսակի (ՀՀ ՔՕ 50-րդ հոդվածի 1-ին, ՌԴ ՔՕ 45-րդ հոդվածի 1-ին մասեր), հետ լրացուցիչ պատիժներ սահմանելու խնդիրը և հիմնավորվում է որպես այդպիսին միայն որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կիրառելու նպատակահարմարությունը: Հատկանշական է, որ ՀՀ ՔՕ Հատուկ մասում կալանքի հետ լրացուցիչ պատիժներ սահմանող հոդվածներ ներառված չեն:

Հստակեցման կարիք ունի նաև տասնվեց տարին չլրացած անչափահասների, հղի կանանց և խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ կալանքի ձևով պատժի կիրառումը: Մասնավորապես ՀՀ ՔՕ 57-րդ

հողվածի համաձայն՝ կալանքը չի կարող կիրառվել նշված խմբի անձանց նկատմամբ խիստ պատժատեսակ լինելու պատճառաբանությամբ, սակայն փաստացի օրենսդրական այդ պահանջի ապահովումն անհնար է դարձել, քանի որ մի շարք հողվածներ չեն նախատեսում կալանքից ավելի մեղմ պատժատեսակ: Օրենքի տառի հետ հակասություններից խուսափելու համար անհրաժեշտություն է առաջանում այդ հողվածները համալրել ներգործության ավելի մեղմ աստիճան ունեցող պատժատեսակներով, ինչպիսիք տուգանքը կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկումն են:

Կալանքի կիրառման համատեքստում ուսումնասիրվել է նաև հանցանքների ու դատավճիռների համակցությամբ վերջնական պատժի նշանակման խնդիրը: Արձանագրվել է, որ կալանքի կարճ ժամկետի սահմանմամբ պայմանավորված, հակասություն է առաջանում ՀՀ ՔՕ Ընդհանուր մասի կանոնների հետ, համաձայն որոնց՝ հանցագործությունների և դատավճիռների համակցությամբ նշանակված պատիժը բոլոր դեպքերում պետք է ավելի խիստ լինի, քան առանձին հանցանքի կամ առանձին դատավճռով նշանակված պատժատեսակը, և ՔՕ 66 և 67-րդ հողվածների բովանդակության հետ, ըստ որի՝ վերջնական պատիժը չի կարող գերազանցել ՔՕ Ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն չափը: Հակասությունը վերացնելու համար նպատակահարմար է բարձրացնել կալանքի առավելագույն շեմը մինչև վեց ամիս:

Երկրորդ պարագրաֆը՝ «Կալանքի՝ որպես քրեական պատժատեսակի, կատարման հիմնախնդիրները», հանգամանորեն դիտարկում են կալանքի կատարման ընթացակարգերը:

ՀՀ օրենսդրության՝ կալանքի կատարմանն առնչվող հողվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ ձևակերպումներ հստակեցման կարիք ունեն: Մասնավորապես, կալանքի կրման առանձնահատկություններից մեկն այն է, որ դատապարտյալն այն պետք է կրի նույն վայրում: Դատապարտյալը մեկ վայրից մյուս վայր կարող է տեղափոխվել հիվանդության, անձնական անվտանգության և այլ բացառիկ հանգամանքների դեպքում (ՀՀ ՔԿՕ 55-րդ հողված), սակայն օրենքը չի հստակեցնում «անձնական անվտանգության» և «այլ բացառիկ հանգամանքներ» հասկացությունների իմաստը: Անհրաժեշտ է գործող օրենսգրքում այդ հասկացությունները հստակեցնող համապատասխան լրացումներ կատարել:

ՀՀ ՔԿՕ-ի 56-րդ հողվածի 5-րդ կետն անձնական բացառիկ հանգամանքների դեպքում, որոնք թվարկված են նույն օրենսգրքի 80-րդ հողվածի 1-ին մասում, հիմնարկի պետի որոշմամբ կալանքի դատապարտվածին թույլատրում է օգտվել հեռախոսակապից կամ տրամադրել մինչև չորս ժամ տևողությամբ տեսակցություն: Այս գործառույթը կարող է չարաշահման հիմք հանդիսանալ: Նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է կիրառել հիմնարկի պետի որոշմամբ դատապարտվածին «տրվի հնարավորություն օգտվել հեռախոսակապից» և «նրան տրամադրել կարճաժամկետ տևողությամբ տեսակցություն մերձավորների հետ» բառակապակցությունները:

Ուշադրության արժանի է նաև կալանքից չարամտորեն խուսափելու խնդրի կարգավորումը: Հատկանշական է, որ ՀՀ գործող ՔՕ-ն որևէ սանկցիա չի նախատեսում դրա համար: Վերլուծության արդյունքների հիման վրա ճիշտ ենք գտնում կալանքի կրումից չարամտորեն խուսափելու դեպքում կալանքի չկրած մասի յուրաքանչյուր օրը փոխարինել ազատագրկման երկու օրով:

Երրորդ պարագրաֆը՝ «Կալանքի՝ որպես քրեական պատժի, արդյունավետությունը», լուսաբանում է կալանքի կիրառման արդյունավետության բարձրացմանը նպաստող գործոնները և հանգամանքները, ներկայացնում է զինձառայողների նկատմամբ կալանքի կիրառման առանձնահատկությունները:

Կատարված հետազոտության արդյունքները փաստում են, որ կալանքի ցածր արդյունավետությունը մեծապես պայմանավորված է դրա կրման ժամկետների չհիմնավորված սահմանմամբ, քրեակատարողական հիմնարկներում ձևավորված ավանդույթներով: Միաժամանակ հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կալանքի արդյունավետության բարձրացմանը մասնավորապես կարող են նպաստել պատժի անհատականացման սկզբունքի ապահովումը, կալանքի կատարման պայմանների ապահովումը, դատապարտյալներին անգամ կարճաժամկետ հանրօգուտ աշխատանքներում ներգրավելը, ինչպես նաև դաստիարակչական, անհատական աշխատանքների իրականացումը և օրենսդրության բովանդակության հանրամատչելի պարզաբանումը:

Դիտարկվում են նաև կալանքը՝ որպես պատժատեսակ, զինձառայողների կողմից կրելու մի շարք առանձնահատկություններ: Կալանքի դատապարտված զինձառայողներին հետազայում զինձառայության անցման հնարավորության ընձեռումը հանդիսանում է այդ առանձնահատկություններից կարևորագույնը, և այդ գործընթացը, մեր կարծիքով, մեղմացնում է ներգործության այդ միջոցի պատժական էությունը՝ որոշակի աստիճանով կալանքը մոտեցնելով կարգապահական տույժերի պայմաններին և միաժամանակ լրացուցիչ խթան ապահովում դատապարտյալի ուղղման, զինձառայողի կարգավիճակը վերականգնելու, կալանքը կրելուց հետո հասարակական կյանքին արագ ինտեգրվելու ձգտման համար:

Եզրակացության մեջ ամփոփվում են հետազոտության տեսական եզրահանգումները և ներկայացվում են առաջարկություններ՝ ուղղված քրեական օրենսդրության և կալանքի կիրառման պրակտիկայի բարեփոխմանը և կատարելագործմանը:

1. Կալանքի՝ որպես քրեական պատժատեսակի, էության, հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ դրա նշանակման հարցերի վերլուծությունները թույլ են տալիս կատարել մի շարք եզրահանգումներ ու առաջարկություններ, որոնք, մեր կարծիքով, որոշակի դեր կարող են խաղալ քրեական իրավունքի օրենսդրության, դատական պրակտիկայում կալանքի կիրառման արդյունավետության և օրենսդրական ձևակերպումների բարելավման և հետագա կատարելագործման համար:

2. Այս պատժատեսակն օժտված է մի շարք ընդունելի հատկանիշներով՝ դատապարտյալի խիստ մեկուսացում հասարակությունից, միայն որոշակի անձանց նկատմամբ կիրառելու թույլատրելիություն, որոշակի պայմանների առկայություն՝ անձի կալանավորման տակ չգտնվելը, նախկինում ազատագրկման ձևով պատիժ չկրած լինելը, որոշակի անձանց նկատմամբ կիրառելու արգելքը (դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց, հղի

կանանց, խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց), որոնք հավասար այլ պայմանների դեպքում դրա կիրառումը դարձնում են ավելի արդյունավետ:

Կալանքի՝ որպես քրեական պատժի, էությունն ըստ ՀՀ ՔՕ 57-րդ հոդվածի 1-ին մասի, ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում դատապարտյալի պահելն է: Կալանքը կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում:

Դատապարտյալի վրա կալանքի կիրառման և դրա ներգործության տարրերի ազդեցության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտելու հնարավորությունը սահմանափակելու նպատակով առաջարկում ենք կալանքի նշանակման բարձր շեմ համարել վեց ամիսը, և ըստ այդմ ՔՕ 57-րդ հոդվածի առաջին մասում «կալանքը կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում՝ տասնհինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով և միայն այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել» հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «կալանքը կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում՝ տասնհինգ օրից մինչև վեց ամիս ժամկետով և միայն այն դեպքերում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել և անձը նախկինում դատապարտված չի եղել ազատազրկման հետ կապված պատժատեսակի»:

3. ՀՀ ՔՕ 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանքը չի նշանակվում դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ:

ՌԴ քրեական օրենսգրքը սահմանում է դատարանների կողմից կալանքի նշանակում մինչև տասնչորս տարեկան երեխա ունեցող կանանց նկատմամբ, դրանով իսկ ավելի լայն հնարավորություն ընձեռնելով վերլուծվող պատժատեսակի կիրառության համար:

Օրենսդիրը միաժամանակ նախատեսել է անձին կալանքի դատապարտելու դեպքում այն պայմանականորեն չկիրառելու հնարավորություն:

ՀՀ ՔՕ 50-րդ հոդվածի համաձայն, տուգանքը, հանրային աշխատանքները, կալանքը, կարգապահական գումարտակում պահելը, որոշակի ժամկետով ազատազրկումը և ցմահ ազատազրկումը կիրառվում են միայն որպես հիմնական պատիժներ: Սրանից հետևում է, որ կալանքը կիրառվում է միայն որպես հիմնական պատիժ և կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանք կատարած անձանց նկատմամբ, որը կարող է իրականացնել քրեական պատժի առջև օրենսդրի կողմից դրված նպատակները:

Կալանքի՝ որպես քրեական պատժի տեսակի, օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ օրենսդիրը շեշտը դնում է կալանքի չորս հիմնական առանձնահատկությունների վրա.

- ա) կալանքը դատապարտյալի խիստ մեկուսացումն է հասարակությունից,
- բ) կալանքն անձին անազատության մեջ պահելն է օրենքով հստակ սահմանված կարճ ժամկետով,
- գ) կալանքը կարող է նշանակվել միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ,
- դ) կալանքի կիրառումը արգելվում է դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ:

Վերլուծելով կալանքի կիրառման հնարավորությունները հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ ըստ գործող քրեական օրենսդրության՝ հանգում ենք այնպիսի հետևության, որը, մեր կարծիքով, որոշակի կիրառական նշանակություն կարող է ունենալ այս պատժատեսակի օրենսդրական ձևակերպման կատարելագործման տեսանկյունից:

4. ՀՀ ՔՎՕ 113-րդ հոդվածի 3-րդ մասը կոնկրետ դրույթ է սահմանել, համաձայն որի, եթե բեկանվել է այն դատավճիռը և կարճվել է քրեական գործը, որով անձը դատապարտված է եղել կալանքի, պատժից ազատված անձին պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը պարզաբանում է պատիժը կրելու ընթացքում կասեցված գույքային, աշխատանքային և այլ իրավունքների վերականգնման վերաբերող նրա իրավունքները:

Դատավճիռը բեկանելու հետևանքով քրեական գործի կարճմամբ պատժից ազատվելու վերաբերյալ փաստաթղթի մեջ պետության անունից քրեական պատժից ազատված անձից, պատիժը իրականացնող հիմնարկի պետը պաշտոնապես ներողություն է խնդրում:

Գտնում ենք, որ գործող ՔՎՕ 113-րդ հոդվածի 3-րդ մասում պետք է ավելացնել հետևյալ արտահայտությունը՝ «դատապարտյալի պահանջով պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը պետք է զանգվածային լրատվամիջոցներում, պետության անունից, ներողություն խնդրի քրեական գործի կարճմամբ պատժից ազատվողից՝ նրա բարի համբավն ու անունն արատավորելու, կալանքի անհիմն դատապարտելու համար»:

5. Օրենքի պահանջն այն մասին, որ արգելվում է կալանքի նշանակումը դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ, որոշակի խնդիրներ են առաջացնում և անիրականանալի դարձնում օրենսդրական նշված պահանջները:

Օրենքի տառին հետևելով՝ առաջանում է մի իրավիճակ, երբ ՔՕ 57-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված անձանց նկատմամբ կալանքի կիրառումը ուղղակի բացառվում է:

Նշված հոդվածը դատարանին զրկում է հանցանք կատարած անձանց նկատմամբ, կալանք չկիրառելով հանդերձ, իրացնել օրենքի պահանջը՝ հանցավորներին ավելի մեղմ պատժատեսակի դատապարտել: Ստացվում է, որ օրենքի պարտադիր պահանջը կալանքի նշանակումը արգելելու մասին ավելի է վատթարացնում 57-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված անձանց վիճակը, քանի որ կալանքի չկիրառման դեպքում մնում է միայն ազատազրկման նշանակման հնարավորությունը: Բերված պատճառաբանությունը հիմնավորվում է նաև ՀՀ ՔՕ 61-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությամբ, համաձայն որի, հանցագործության համար նախատեսված պատիժներից ավելի խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ պատիժը չի կարող ապահովել պատժի նպատակները: Այստեղից հետևում է, որ եթե կալանքը

համարվել է խիստ պատժատեսակ թվարկված անձանց համար և չի կարող նրանց նկատմամբ նշանակվել, հետևաբար, պետք է նշանակվի մեղմը, որը հողվածի սանկցիայից բացակայում է: Նման իրավիճակից դուրս գալու միակ ճիշտ ճանապարհն օրենսդրական փոփոխության իրականացնելու ճանապարհն է:

Մեր կարծիքով, հնարավոր կլինի հաղթահարել օրենքի ակնհայտ բացը, եթե ՔՕ Հատուկ մասի այն հոդվածները, որտեղ սահմանված է կալանքի՝ որպես պատժատեսակի, նշանակման հնարավորությունը, պարտադիր նախատեսված լինի «տուգանքը» կամ «որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը» պատժատեսակները: Նշված պատժատեսակների առկայությունը հնարավորություն կտա կալանքի նշանակման անհնարինության դեպքում անդրադառնալ դրանց կիրառմանը:

6. Կալանքը, որն արտահայտվում է դատապարտյալին հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում պահելու մեջ (ՀՀ ՔՕ 57-րդ հոդվածի 1-ին, ՌԴ ՔՕ 54-րդ հոդվածի 1-ին մասեր) կիրառվում է միայն որպես հիմնական պատժատեսակ (ՀՀ ՔՕ 50-րդ հոդվածի 1-ին, ՌԴ ՔՕ 45-րդ հոդվածի 1-ին մասեր): Այս պատժատեսակի հետ միասին կարող է նշանակվել որպես լրացուցիչ պատժատեսակ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը (ՀՀ ՔՕ 250-րդ հոդվածը – միջազգային թռիչքների կանոնները խախտելը):

ՀՀ ՔՕ 51-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանել է, որ տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը կամ դրա չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով, հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց, իսկ ՔՕ 54-րդ հոդվածի 4-րդ մասը արձանագրում է, որ հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ՝ կալանքի կամ որոշակի ժամկետով ազատազրկման մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների երեք ժամվա դիմաց:

ՔՕ-ն չի անդրադառնում այն հարցին, թե ինչպես վարվել կալանքից չարամտորեն խուսափողների նկատմամբ:

Կալանքի կրումից չարամտորեն խուսափելու համար դատապարտյալին ավելի խիստ պատժատեսակի դատապարտելու հիմքեր կարող են հանդիսանալ, օրինակ, դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատապարտյալի կամավոր չներկայանալը պատժի կրման վայր կամ առանց արտակարգ հանգամանքի կամ անձնական բնույթի բացառիկ իրադարձությունների հետ կապված կարճաժամկետ մեկնումից չվերադառնալու դեպքերը: Անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում, անշուշտ, հարց կառաջանա այդ անձին ավելի խիստ պատժի դատապարտելու անհրաժեշտության մասին, իսկ կալանքից ավելի խիստ պատժատեսակ, ըստ գործող քրեական օրենսդրության, հանդիսանում է որոշակի ժամկետով ազատազրկումը: Կալանքի չկրած մասը (կամ ամբողջովին նշանակված կալանքը) ավելի խիստ պատժատեսակ հանդիսացող ազատազրկմամբ փոխարինելը (ազատազրկումը պատժառանկալարգում շարադրված է կալանքից հետո, ՔՕ 49-րդ հոդված) ոչ միայն արդյունավետ ներգործության միջոց չի հանդիսանա կալանքի տեսքով պատժի կրումից չարամտորեն խուսափող դատապարտյալի համար, այլև միջոց կհանդիսանա ավելի խիստ ներգործության տարրերով օժտված պատժատեսակի՝ կալանքի, կրումից ազատվելու համար, քանի որ կալանքը՝ որպես կարճաժամկետ ազատազրկման միջոց, ունի ներգործության ավելի խիստ տարրեր, քան նույն ժամկետով ազատազրկումը, հետևաբար, նման պայմաններում դատարանը կալանքի չկրած մասը պետք է փոխարինի ազատազրկմամբ: Այդ հանգամանքից ելնելով հիմնավոր է կալանքից չարամտորեն խուսափելու համար գործող քրեական օրենսգրքում կատարել լրացում՝ կալանքի չկրած յուրաքանչյուր օրը փոխարինելով ազատազրկման երկու օրով:

7. Կալանքի դատապարտվածներին խիստ մեկուսացման պայմաններում պահելու անհրաժեշտությունը հիմնավորելով հանդերձ, կարծում ենք, որ նրանց հետ դաստիարակչական, անհատական աշխատանքներ իրականացնելն ուղղակի անհրաժեշտություն է:

Այդ աշխատանքները, ի դեպ, պետք է ունենան բազմակողմանի հետաքրքրություն ներկայացնող բովանդակություն: Այդ գործընթացին, առաջին հերթին, մասնակից պետք է դարձվեն պետական, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Վերջիններիս շարքին պետք է դասել կրոնական կազմակերպություններին, որոնք իրենց բնորոշ քարոզչական միջոցներով կարող են արդյունավետ ազդեցություն ունենալ հավատացյալների և այն անձանց վրա, որոնք հոգևոր մաքրման ճանապարհով ցանկանում են ազատվել անցյալի մեղքերից, զղջալ իրենց կատարածի համար և վերադառնալ սոցիալապես նպաստավոր կյանքի:

8. ՀՀ գործող ՔԿՕ-ն (55-րդ հոդվածի 3-րդ մաս) շեշտում է, որ կալանքի դատապարտվածը պատժի որջ ժամկետը, որպես կանոն, կրում է պատիժը կրելու նույն վայրում: Դատապարտյալը պատիժը կրելու մեկ վայրից մյուսը կարող է փոխադրվել «անձնական անվտանգությունն ապահովելու նպատակով», սակայն դրա իմաստը օրենսգրքում բացահայտված չէ: Գտնում ենք, որ անվտանգության տակ հասկացվում է արտաքին սպառնալիքներից դատապարտյալի կենսական նշանակության շահերի պաշտպանությունը: Իսկ կենսական շահերն իրենցից ներկայացնում են այնպիսի պահանջների ամբողջություն, որոնց բավարարումը հուսալիորեն ապահովում է անձի անվտանգությունը և կենսագործունեությունը: Դրանց թվին կարելի է դասել հանցագործության բացահայտմանն ակտիվ մասնակցություն ցուցաբերած և իրավապահ մարմինների հետ համագործակցած դատապարտյալին անձնական անվտանգության նպատակով այլ անձանցից մեկուսացված պահելու անհրաժեշտությունը, հետևաբար, այդ մասին գործող օրենսգրքում լրացում կատարելն անհրաժեշտություն է դառնում:

9. ՀՀ ՔԿՕ-ն չի տալիս նաև «դատապարտյալի՝ պատիժը կրելու մեկ վայրից մյուսը փոխադրելու» և «այլ բացառիկ հանգամանքներ» հասկացությունների հիմքերն ու բովանդակությունը:

Մեր կարծիքով «բացառիկ հանգամանքների» և դատապարտյալին պատիժը կրելու մեկ վայրից մյուսը փոխադրելու հիմքերի թվին պետք է դասել տարերային աղետները, (ջրհեղեղ, երկրաշարժ և այլն), որոնք անհնար են դարձնում կալանքի դատապարտվածին տվյալ վայրում պահելու հնարավորությունը, տեխնաձին բնույթի այլ իրադարձությունները (ատոմակայանի պայթյուն, հրկիզում, էկոցիդ և այլն), կալանատանը ծագած իրավախախտումների կանխարգելման ու կատարված հանցագործությունների բացահայտման անհրաժեշտությունը, նույն քրեական գործով կալանքի

դատապարտված անձանց տարանջատման խնդիրը, իրավապահ մարմինների հետ համագործակցությամբ հանցագործության բացահայտմանն ակտիվ մասնակցություն ցուցաբերած դատապարտյալի անվտանգության ապահովումը: Այս վերջին հանգամանքի իրականացման գործընթացում այսօր ՀՀ-ն այն խնդիրն ունի, որ ՀՀ տարածքում գործում է բացառապես Հրազդանի կալանատունը, և եթե այդ քրեակատարողական հիմնարկում հարցեր առաջանան կալանքի դատապարտված անձի (անձանց) անվտանգության նկատառումներից ելնելով, ապա կառաջանա նրան (նրանց) այլ կալանատուն տեղափոխելու անհրաժեշտություն, ուստի արդիական է նաև երկրորդ՝ այլընտրանքային կալանատան շահագործման հարցը:

«Բացառիկ հանգամանքների» թվին պետք է դասել կալանքի դատապարտված անձանց հանդիպումը մեծահասակ ծնողների և երեխաների հետ կազմակերպելու նպատակով այդ անձանց կալանատուն ներկայանալու տարածքային անհարմարությունները, իհարկե, եթե կալանատան վարչակազմը համոզվի, որ ծնողների ու երեխաների հետ հանդիպումը կալանքի դատապարտվածի վրա դրական ազդեցություն կարող է ունենալ: «Բացառիկ հանգամանքներ» կարող են դիտարկվել նաև կալանատներում զանգվածային անկարգություններին դատապարտյալի մասնակցությունը կանխելը, համաճարակը և այլն՝ օրենսդրության մեջ կատարելով համապատասխան լրացումներ:

10. Անհրաժեշտ է փոփոխություն մտցնել ՀՀ ՔՕ 57-րդ հոդվածի մեջ՝ շարադրելով այն հետևյալ բովանդակությամբ.

«1. Կալանքն ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում դատապարտյալի պահելն է: Կալանքը կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար ՔՕ Հատուկ մասով նախատեսված դեպքերում՝ տասնհինգ օրից մինչև վեց ամիս ժամանակով և միայն այն դեպքերում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել և անձը նախկինում դատապարտված չի եղել ազատագրվման:

2. Կալանքը չի նշանակվում դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ:

3. Զինձառայողները կալանքը կրում են կայազորային կարգապահական մեկուսարանում:»

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրատարակումներում

1. Կալանքի իրավական էությունն ըստ գործող քրեական օրենսդրության. «Արդարադատություն» ամսագիր 4(19), 2012, էջ 44-47:

2. Կալանքի՝ որպես քրեական պատժի նշանակման մի քանի հարցեր. «Արդարադատություն» ամսագիր 4(23), 2013, էջ 47-50:

3. Կալանքի՝ որպես քրեական պատժի տեսակի, հասկացությունը. «Դատական իշխանություն» ամսագիր 5 (166), 2013, էջ 10-14:

4. Քրեական պատիժների կիրառման նշանակությունը հանցավորության դեմ պայքարում. «Արդարադատություն» ամսագիր 4(35), 2016, էջ 81-83:

5. Կալանքի կատարման առանձնահատկությունները. «Դատական իշխանություն» ամսագիր 10-11 (208-209), 2016, էջ 100-105:

6. Կալանքի՝ որպես քրեական պատժի արդյունավետությունը. «Դատական իշխանություն» ամսագիր 12 (210), 2016, էջ 52-57:

Налбандян Мартын Симонович
Арест как мера наказания по уголовному законодательству Республики Армения и Российской Федерации

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению проблем, связанных с назначением и применением такого вида уголовного наказания, как арест, в Республике Армения (РА) и Российской Федерации (РФ). Арест является относительно новым видом наказания как в РА, так и РФ, и пока мало изучен. Эффективность уголовного наказания является ключевым фактором для достижения целей наказания: восстановление социальной справедливости, исправление осужденного и предупреждение преступлений. В связи с этим автор ставит перед собой цель изучить такие аспекты, как сущность и цели ареста, особенности назначения и исполнения данного вида наказания, место ареста в системе уголовных наказаний, эффективность данного вида наказания с точки зрения достижения целей наказания, предусмотренных в законодательстве.

Актуальность темы исследования состоит в том, что действующее законодательство содержит новые положения, существенно изменилась система наказаний, по-новому изложены цели наказания, которые, несомненно, требуют теоретических и практических исследований в данной области. В нашей стране не проводились научные исследования такого вида наказания, как арест, который был включен в систему наказаний относительно недавно, особенности назначения данного вида наказания судом, его исполнения в уголовно-исполнительных учреждениях, а также вопроса эффективности данной меры в борьбе с преступностью. Таким образом, возникла необходимость исследования ареста как вида наказания и внесения предложений для совершенствования как теории, так и правоприменительной практики.

Автор ставит перед собой задачу посредством анализа правовой базы, судебно-следственной практики, а также практики исполнения наказания выявить существующие пробелы как в законодательстве, так и в правоприменительной практике, и на основе этого предлагает ряд рекомендаций, направленных на повышение эффективности ареста как вида уголовного наказания.

Автор изучил и проанализировал существующую теоретическую базу по этой тематике и судебную практику назначения ареста за 2008-2015 годы.

Научная новизна диссертации состоит в том, что в ней впервые предлагается всестороннее и комплексное изучение проблемы применения и исполнения относительно нового для РА вида наказания – ареста.

Автор также проанализировал арест в общей системе уголовных наказаний, сформулировав общие и отличительные признаки, преимущества и недостатки ареста в данном контексте. В частности, в работе рассматриваются такие проблемы, как срок, на который назначается арест; применение ареста взамен других уголовных наказаний; условия содержания; перечень лиц, в отношении которых арест не может назначаться; невозможность замены ареста более мягким видом уголовного наказания; регламентация уголовной ответственности за уклонение от ареста; средства исправления, применяемые к осужденному к аресту; применение ареста в отношении военнослужащих, несовершеннолетних, беременных женщин и лиц, имеющих под опекой детей в возрасте до восьми лет, а также возможности, предоставляемые лицам, отбывающим наказание в виде ареста.

На основе изложенного автор разработал новые теоретические положения, которые направлены на развитие практики применения и исполнения ареста как вида наказания, и предложил обоснованные рекомендации относительно правоприменительной практики.

Также обосновывается необходимость внесения изменений в Уголовный и Уголовно-исполнительный кодексы с целью совершенствования действующего законодательства и повышения эффективности данного вида наказания и обеспечения достижения целей наказания.

Теоретическая и практическая значимость исследования определяется тем, что впервые арест исследуется на уровне диссертации. Результаты исследования – предложения, выводы, могут быть полезны для лучшего понимания сущности видов наказаний, для более глубокого и всестороннего понимания их воздействий, а также для совершенствования законодательной базы.

Работа имеет большое теоретическое и практическое значение. Выводы и рекомендации исследования могут быть использованы в правотворческой и правоприменительной практике.

Диссертация состоит из введения, двух глав, которые включают в себя пять параграфов, заключения и списка использованной литературы.

Martin Nalbandyan

**Arrest as a criminal sanction in the Armenian and
Russian criminal law**

SUMMARY

The thesis is aimed to analyse the challenges arising in application and enforcement of arrest as a type of criminal sanction in the Republic of Armenia. Arrest is rather new type of criminal sanction for Armenia and Russia and has not been well researched yet. The effectiveness of the criminal sanction is key to reach the objectives of the punishment: restoring social justice, rehabilitation of offender and prevention of crimes. That is why the authors aims to analyse such aspects as essence of arrest as a sanction, particularities of its enforcement, the place of this sanction in the system of criminal sanctions, effectiveness of arrest from the perspective of the objectives of punishment stipulated by law.

The topicality of the research topic derives from the fact that the current legislation contains new provisions, the system of sanctions has been significantly changed, and objectives of the punishment are reconsidered. Therefore, the theoretical and practical research in this area is a pressing need. There has been no research conducted in Armenia on such issues as particularities of a relatively new type of sanction - arrest, application of this sanction by courts, its enforcement in penitentiary institutions, as well as its effectiveness in combating crime. Thus there is a need to study arrest as a type of sanction and to propose recommendations aimed at improvement of both theory and practice.

By analysing the current legislation, case-law and sanction enforcement practice the author attempts to reveal existing gaps in law and challenges in practice, and based on this proposes recommendations aimed at enhancing effectiveness of arrest as a type of sanction.

The scientific novelty of the thesis is that this is the first attempt of comprehensive and complex analysis of the issue of application and enforcement of this rather new type of sanction in Armenia - arrest.

The author reviewed and analysed existing theoretical framework on this topic as well as case-law on application of arrest as sanction for 2008-2015.

The place of arrest in the general system of criminal sanctions is analysed in the thesis, common and different characteristics as well as advantages and disadvantages in this context are identified. In particular, the thesis addresses such issues as the term of arrest, application of arrest instead of other criminal sanctions, the conditions of detention when serving arrest, the list of categories of offenders to whom it may not be applied, lack of possibility to replace arrest with softer sanction, lack of regulation for avoiding to serve arrest, methods of rehabilitation towards the offender, application of arrest to military personnel, juveniles, pregnant women and women having children under the age of eight as well as opportunities provided to offenders serving arrest.

Based on the research conducted, the author comes up with new theoretical proposals aimed to develop the practice of application and enforcement of arrest as a sanction, as well as proposes well grounded recommendations related to practice. In addition, the author justifies the necessity to make amendments and changes in the Armenian Criminal and Criminal-Executive Codes in order to improve the current legislation and enhance effectiveness of this type of sanction and realisation of the objectives of punishment.

Theoretical and practical significance of the thesis comes from the fact that for the first time in Armenia arrest is studied at the level of thesis.

The outcomes of the research, that is its recommendations and conclusions, may be useful for better understanding of the essence of the sanctions, for deeper and comprehensive understanding of their impact as well as improvement of the legislation.

The thesis has great theoretical and practical significance. The conclusions and recommendations of the research can be used in law-making and in practice.

The thesis consists of an introduction, two chapters, which include five paragraphs, a conclusion and bibliography.

A handwritten signature in blue ink, consisting of several overlapping, fluid strokes that form a stylized, abstract shape.